Ս. Սինոդի կարգադրութեամբ բարեշն. Բարդուղիմէոս Վարդապետ Գէորգեան նշանակեցաւ Նոր-Բայազիտի և Դարաչիչակու գաւառաց Հոգ. Գործակալ։ Կցանկանք կատարեալ յաջողութիւն։

—

Տփխիսու վիճակային Առաջնորդ Գեր. Արիստակէս Եպիսկոպոսի և վիճակային Կոնսիստորիայի առաջարկութեան համաձայն Սինոդն Ս. Էջմիածնի ի տեղի Գէորգ աւագ քահանայի Թէմուրազեանց կարգեց Անդամ տեղւոյ Կոնսիստորիայի բարեկրօն Խօջաէյնաթեան Թադէոս աւագ քահանային։

—

Անցեալ 8ին ժամանեց ի Մայր Աթոռս Գրանսիայի Օրլեան Շարդրի Դուքսը, որին Ս. Էջմիածնի Միաբանական Ուխտը արեց արժանավայել ընդունելութիւն։ Նորին բարձրութեանը ուղեկից էին ազնուական Գերդինանդ դ' Օռվէ և Կովկասեան կառավարչապետի առանձին յանձնարարութեանց աստիճանաւոր նադվօրնի Սովետնիկ Միխայէլ Պավլովիչ Գակկել, և Նորին Գերազանցութիւն Երևանի Տ. Նահանգապետ Շալիկովը։ Մեծ. հիւրերը Վեհարանի մէջ ընդունվելուց և փոքր ինչ հանգըստանալուց յետոյ գնացին Ս. Տաճարը և թանգարանը, որոնք ի ներքուստ և արտաքուստ ասենայն հետաքրքրութեամբ դիտելուց և զննելուց յետոյ այցելեցին Մայր Աթոռոյս Գէորգեան ճեմարանին և նորա մատենադարանին, որոց մասին մանրամասն տեղեկութիւններ ստանալուց յետոյ գնացին դիտելու Ներսէս Ե. արժանայիշատակ Կաթուղիկոսի շինել տուած լիճն ու անտառը և անտի Մայր Աթոռոյս մատենադարանը, ուր նոցա հետաքրքրութիւնը գլխաւորապէս գրաւեցին մի քանի հին ձեռագիր Աւետարաններ։ Այս այցելութեան միջոցին Մեծ. հիւրերին ուղեկից էին Տ. Տեղակալ Մկրտիչ Արքեպիսկոպոսը, Սինոդի Ս. Անդամները և Միաբանական Ուխտը։ Ժամը 4ին վերադառնալով Վեհարան ճաշեցին և ապա ամենայն գոհութեամբ մեկնեցան Երևան։ Թարգմանչի պաշտօնը կատարում էր ճեմարանի ուսուցիչ Պ. Ս. Պալասանեանցը։

—

Անցեալ 8ին նոյնպէս ժամանեց ի Մայր Աթոռս Յովսէփ Վիւնշ, գիտնական Բոհեմացի պրոֆէսորը։ Մեծապատիւ գիտնականը մեծ հետաքրքրութեամբ այցելեց Մայր Աթոռոյս Թանգարանին, Մատենադարանին, ճեմարանին և նորա Մատենադարանին։ Նա աւելի հետաքրքրքրուեցաւ մի քանի ձեռագիր Աւետարանների գեղեցիկ գրչութեամբը և կենդանագոյն նկարներով։ Պ. Գիտնականը ամսոյս 11ին մեկնեցաւ Մայր Աթոռէս և պէտք է գնայ Վանայ, Սղերտի, Բաղիշու, Մշոյ և այլ. կողմերը, այն տեղերի աշխարհագրական դիրքն ուսումնասիրելու և Տիգրիսի ու Եփրատի ակունքները ճշտապէս հետազօտելու, լրացնելով Եւրոպացի ճանապարհորդների Հայաստանի մասին արած կարևոր գիտնական հետազօտութիւնները։ Այս երկրորդ ճանապարհորդութիւնն է, որ Պ. Պրոֆէսորը կատարում է Հայաստանի մէջ։